«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընթերցանությունը տարրական դասարաններում»

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Մարկոսյան Ռ.

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ԳԼՈՒԽ 1 ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ----------4

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ ----------7

ԳԼՈՒԽ 2 ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ ----------9

ԳԼՈՒԽ 3 ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ----14

ԻՆՉՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՄԵՋ ՍԵՐ ԱՆԹՆԱՑՆԵԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ-------15

ԳԼՈՒԽ 4 ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ ----------18

ԳԼՈՒԽ 5 ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՅՍ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՐՈՒՄ----------20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը հոգևոր կյանքի զարգացման պատմության մեջ կատարել ու այսօր էլ կատարում է անգնահատելի դեր: Այդ են վկայում մատենադարաններում ու գրադարաններում դարերով գոյատևած հայկական ձեռագրերն ու ավելի քան 500-ամյա հայ տպագիր մշակույթը :

Սույն աշխատանքը նվիրված է դպրոցական կրթական համակարգում քիչ շոշափված, բայց մեծ նշանակություն ունեցող հիմնախնդիրներից մեկին՝ այդ համակարգի համակողմանի զարգացման գործում ընթերցանության դերի լուսաբանմանը: Դպրոցական կրթության ընթացքում է, որ աշակերտները հաղորդակցվում ընթերցանության հետ, ձեռք են բերում ընթերցողական և գեղարվեստական ճաշակ, զարգացնում բանավոր և գրավոր խոսքը, ցուցաբերում են կուտակած գիտելիքները դրսևորելու կարողություններ:

Դպրոցական կրթական համակարգում ընթերցողների և գրքային ռեսուրսների միջև հարաբերությունը բխում է ուսումնական ծրագրերից , դպրոցի աշակերտների ընթերցողական պահանջներից : Որպեսզի դպրոցում ստեղծվի տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայր, անհրաժեշտ են գրադարանային ֆոնդերի շարունակական համալրում, գրքերի տեսության և թեմատիկ այլ միջոցառումների կազմակերպում:

Իմ կարծիքով, գրքից հեռանալու և ընթերցանության պակասի միտումները, որոնք նկատելի են նաև հայ իրականության մեջ, արդյունք են հենց տեխնոլոգիական միջոցների մասսայական տարածմանն ու նրանց հետ «անհարկի կապի: Այժմ ստեղծվել է սոցիալ-հոգեբանական մի իրավիճակ, որն անգամ սահմանափակել է ծնողների կապն ու շփումը երեխաների հետ… Ավելին, գրելու արվեստը՝ որպես մշակութային երևույթ, անհետանում է: Այս իրավիճակը թելադրում է էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրներից օգտվողների (անկախ սեռից, տարիքից և ազգությունից) ընթերցանության ղեկավարման նոր, բայց դժվարին խնդիր, որի իրականացումը խիստ պարտադիր է:

ԳԼՈՒԽ 1

ԳՐԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մինչ ընթերցանական հմտություններին ու կարողություններին տիրապետելը, երեխաները առաջին դասարանում հաղորդակցվում են Գրական ունկնդրման դասաժամերին:

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա, լավ թե վատ, ճիշտ թե սխալ, անընդհատ հաղորդակցվում է, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Կրտսեր դպրոցի խնդիրն է օգնել երեխային ճիշտ կազմակերպելու գրավոր ու բանավոր խոսքը, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները և հաղորդակցվել:

Գրական ունկնդրումն ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ պետք ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ: Ուսումնական նշված միջավայրը նպաստում է, որ երեխան, առանց սխալվելու վախի, արտահայտի իր մտքերը, կարծիքներն ու հույզերը:

Ուսուցչուհին գրական ունկնդրման դասերը պետք է վարի այնպես, որ երեխաները չհայտնվեն պասիվ ունկնդրի դերում: Ունկնդրման համար ընտրվող գեղարվեստական գրականությունը պետք է լինի.

- մատչելի և հետաքրքիր բովանդակությամբ, ոչ ծավալուն, պատմողական, դինամիկ զարգացող սյուժեով
- բնության, հայրենի երկրի, կենդանիների, ճանապարհորդությունների մասին
- երեխաների կյանքը արտացոլող, որպեսզի հիշեցնի սեփական անձի հետ կապված իրավիճակներ
- հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների ստեղծագործությունների ընտրանի (արձակ և չափածո)
- ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշներ

- հումորային, զվարճալի պատմություններ

Ունկնդրման միջոցով աշակերտներն ընկալում են գրական տեքստը: Ունկնդրումը նպաստում է խոսքի, երևակայության և մտածողության զարգացմանը: Գրական ստեղծագործության միջոցով փոխանցվող դեպքերը հուզազգայական վերաբերմունք են առաջացնում:

Գրական ունկնդրման դասերն նպաստում են սովորողների բառապաշարի հարստացմանը: Ձևավորում է կենդանիների, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, կարդացածի վերաբերյալ կարծիք արտահայտելու կարողություն: Նրանք պարզագույն պատկերացում են կազմում շրջակա աշխարհի մասին: Ծանոթանում են հասակակիցների կյանքին, նրանց խնդիրներին:

Ճիշտ ընտրված հեքիաթները, մանկական պատմվածքներն ու բանաստեղծությունները հետաքրքիր ու բովանդակալից կդարձնեն գրաճանաչության ընթացքը, կլրացնեն կարդալու և հաղորդակցվելու կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, կլուսավորեն և կմարզեն երեխայի միտքը, կսովորեցնեն խոսել գեղեցիկ գրական հայերենով: Մինչ երեխային ինքնուրույն ընթերցանության համար գիրք առաջարկելը՝ անհրաժեշտ է նախապատրաստել նրան նոր գրքի շուրջ աշխատանքին, այսինքն՝ ստեղծել պայմաններ, որոնց ընթացքում կարթնանա ճանաչողական հետաքրքրություն, ինչն էլ կօգնի աշակերտին հաղթահարելու կարդալու տեխնիկայի հետ կապված դժվարությունները: Աշակերտի ընթերցանության համար նախատեսված ոչ ծավալուն ստեղծագործությունը պետք է հրապուրի երեխաներին և ընթերցելու ցանկություն առաջացնի:

Անծանոթ գրքի ինքնուրույն ընթերցանությունն առաջին դասարանցու համար այնքան բարդ աշխատանք է, որ առանց ուսուցչի ճիշտ մշակված օգնության, ոչ բոլոր աշակերտներն են ունակ՝ դրանք հաղթահարելու: Այս տարիքում երեխաները նախընտրում են ունկնդրել գեղարվեստական ստեղծագործությունը և ոչ թե ընթերցել: Հարկավոր է երեխաներին սովորեցնել հաղթահարել կարդալու հետ կապված դժվարությունները: Պետք է աշխատանքն այնպես կազմակերպել, որ աշակերտները հաճույք ստանան ինքնուրույն կերպով գրքին հաղորդակցվելիս:

Գրական նյութերի ուսուցման ժամանակ թվային միջոցների գործածումը նոր մեթոդների կիրառում է ենթադրում: Երեխան լսում, կարդում, ապա դիտում է իր կարդացածը: Արդյունավետ և հետաքրքիր է անցնում գրական ունկնդրման դասաժամը, երբ աշակերտը լսում է, դիտում հեքիաթները, ապա պատմում-ձայնագրվում է թվային ձայնագրիչով և նորից լսում, հետո նկարում վրձնով, ինչպես նաև համակարգիչով, բեմադրում-տեսագրում է՝ դառնալով հեքիաթի կերպար և հերոս:

Կրտսեր դպրոցականի ընթերցանության զարգացման վրա զգալի ազդեցություն է ունենում համաշխարհային մանկական գրականությունը; Անհրաժեշտ է ընտրել այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է երեխայի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը: Այդպիսի գործեր են, օրինակ՝ Ջանի Ռոդարիի §Շոկոլադե ճանապարհը», Վ.Բիրյուկովի §Քաղաքավարի գորշուկը¦ Դ.Բիսեթի §Մոռացված ծննդյան օրը ¦…

Նոր գրքին ծանոթացումը կատարվում է հետևյալ ընթացքով. երեխաները ուսումնասիրում են գրքի շապիկը, որոնում և գտնում են վերնագիրը, հեղինակի անուն ազգանունը, թերթում են գիրքը: Աշակերտներից որևէ մեկը բարձրաձայն ընթերցում է գրքի սեղմագիրը: Այնուհետև երեխաներն արտահայտում են իրենց ենթադրությունները՝ գրքի բովանդակության մասին: Ուսուցիչը ցուցում է տալիս, թե այդ գրքից որ ստեղծագործությունն է անհրաժեշտ ընթերցել: Ընթերցելուց հետո անհրաժեշտ է կատարել տարաբնույթ աշխատանքներ տեքստի շուրջ: Կարելի է հանձնարարել տանը նկարել, փնտրել և դասարան բերել նմանատիպ նոր ստեղծագործություններ:

Ուսուցիչը մեկնաբանում է ստեղծագործության վերնագիրը, ժանրը, թեման, իսկ գրքի շուրջ ամբողջ աշխատանքն անցկացվում է երեխաների սկզբնական ընկալումից հետո:

Ընթերցանության փուլ

1. Խոսքային վարժությունների նյութն ընտրվում է այնպես, որ հնարավորություն ստեղծվի ակտիվացնելու երեխաների կենսափորձը: Միևնույն ժամանակ ներկայացված պատկերները պետք է փոխկապակցված լինեն տեքստի բովանդակության հետ: Դրանք նախապես գրվում են վահանակների վրա, իսկ մյուս կողմում նկարներն են:

Ակնկալվող պատասխաններ լսելուց հետո հանձնարարվում է բնութագրել կենդանիներին իրենց պատկերացմամբ.

Աքաղաղ-ազնիվ, միամիտ, լսող

Շուն-հավատարիմ, ուժեղ, բարի

Աղվես-խորմանակ, խարդախ, գող

2. Որպես դադար՝ փորձում ենք ինչ-որ շարժումով նմանակել վերը նշված հերոսներին:

3. Հանձնարարվում է բացել Հովհ.Թումանյանի հեքիաթների գիրքը, ծանոթանալ հեղինակին և գուշակել, թե որ հեքիաթն ենք կարդալու:

Ընթերցանությունը սկսում ենք անհատական մոտեցում ցուցաբերելով: Թույլ մտավոր կարողություններ ունեցող աշակերտներին հանձնարարվում է կարդալ վերնագիրը և խորհել, թե ինչի մասին կարող է լինել հեքիաթը: Միջին ունակություններ ունեցող աշակերտները ընթերցում են մի հատված: Ուժեղներին հանձնարարվում է ընթերցել ամբողջը և մտածել գրատախտակին գրված հարցի շուրջ: Կարդալուց հետո բացատրվում է անհասկանալի բառերն ու բառակապակցությունները: Կատարում են ստեղծագործական աշխատանք՝ հեքիաթի նկարազարդման, բովանդակության, կերպարների շուրջ: Այն ներառում է հետևյալ քայլերը.

- նկարը համեմատել հեքիաթի բովանդակության հետ
- հեքիաթի ո՞ր դրվագն է ներկայացված նկարում
- նկարագրել հերոսներին. ինչպե՞ս են խոսում կամ ի՞նչ են խոսում:

Հանձնարարվում է խմբային աշխատանք: Աշակերտները բաժանվում են երեք խմբի: Առաջին խումբը մտածում է նոր վերնագիր, երկորդը փոխակերպում է հերոսներին, երրորդ խումբը մտածում է հեքիաթի այլ ավարտ: Լսվում և քննարկվում են բոլոր խմբերի պատասխանները: Խրախուսվում են բոլորը:

Կարևոր է աշակերտների հետ քննարկել տեքստի շուրջ կատարվող աշխատանքները: Երեխան պետք է կարդա հասկանալով, ընկալի տեքստի հիմնական միտքը: Ընկալելուց բացի՝ կարևոր է, որ երեխան կարողանա վերարտադրել, այսինքն՝ պատմել տեքստի հիմնական բովանդակությունը՝ փոփոխելով առանձին բառեր կամ նախադասություններ: Խնդիրն այլ է, եթե ուսուցչի կողմից հանձնարարվում է մտածել նոր ավարտ կամ փոխել հերոսներին:

ԳԼՈՒԽ 2

ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ

Կրտսեր դպրոցական տարիքում երեխաները խաղի մեծ պահանջմունք ունեն: Խաղը երեխաների մտավոր ակտիվության դաստիարակման արժեքավոր միջոց է: Այն երեխաների մեջ կենդանի հետաքրքրություն է առաջացնում, զարգացնում է ճանաչողությունը՝ օգնելով յուրացնել ցանկացած նյութ:

Ընթերցանությունը էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է գտնել ընթերցանության այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն աշակերտների ստեղծագործական միտքը:

Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից: Ընդհանրապես կրտսեր դպրոցականի համար խաղը ճանաչվում է որպես գործունեության հիմնական ձև: Գործունեության այս ձևը հատկապես կարևորվում է տվյալ տարիքային խմբի համար:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխայի համար առաջատար գործունեություն արդեն սկսում է դառնալ ուսումը: Բայց այդ դպրոցականը, որը դեռ երեկ տարված էր իր զվարթ խաղերով, չի կարող լիովին զերծ մնալ դրանից: Այդ իսկ պատճառով, երբ ուսուցումը համեմվում է խաղերով, դրանք երեխաների համար դառնում են ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի:

Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ, դասարանում ստեղծվում է մի նոր, յուրահատուկ միջավայր: Եթե ուսուցիչ-աշակերտ և, ինչու չէ, աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչև այդ գոյություն ունեին ինչինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են: Այդ մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ աշակերտներն անկաշկանդ արտահայտեն իրենց մտքերը: Խաղն ունի մի այնպիսի հիանալի հատկություն, որ երեխային կարող է նրա համար էլ աննկատելիորեն ընդգրկել ընթերցանության մեջ:

Խաղի ժամանակ երեխան ավելի է կենտրոնանում՝ տարվելով հետաքրքրաշարժությամբ և ավելի հեշտությամբ էլ մտապահում է առաջին անգամ տեսածն ու լսածը:

Ընթերցանության գործընթացում կիրառվող խաղերին ներկայացվում են որոշակի մանկավարժական պահանջներ: Դրանցից ելնելով՝ անհրաժեշտ է խաղն այնպես ընտրել, որ այն համապատասխանի ուսումնասիրվող թեմային, աշակերտների տրամադրություններին ու տարիքային առանձնահատկություններին, ինչպես նաև օգնի՝ ճիշտ ըմբռնելու բովանդակությունը:

Ինչպես ցանկացած մանկավարժական հնար, ուսումնական տեխնոլոգիա, այնպես էլ հետաքրքրաշարժության տարրերով հարուստ խաղը կարող է նույնիսկ ձանձրացնել երեխաներին, եթե չփոփոխվի ու անընդհատ կրկնվի նույնությամբ: Այդ իսկ պատճառով խաղը պետք է կիրառվի ստեղծագործաբար: Ցանկացած խաղ ցանկալի է տեսնել ոչ թե անխախտ կաղապարի, այլ աստիճանական զարգացման մեջ, որպեսզի երեխայի մեջ չկորչի հետաքրքրությունը, թե՛ դրա և թե՛ ուսուցման նկատմամբ:

Փորձը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցականների միջավայրում խաղն առավել արդյունավետ է լինում, եթե մինչև կիրառումը քննարկվում է աշակերտների հետ: Երբ հաշվի են առնվում երեխաների առաջարկությունները, խաղը դառնում է ավելի հետաքրքիր: Աշակերտները մեծ հաճույքով են մասնակցում և հեշտությամբ ու առանց պարտադրանքի ներգրավվում են ընթերցանության մեջ:

Առհասարակ խաղն ուսուցման գործընթացում օգնում է բազում նպատակների իրականացմանը: Լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիրակչական բազմապիսի խնդիրներ, ինչպիսիք են կարգապահություն, հաղորդակցում, իրար լսելու կարողություն, համագործակցություն և այլն:

Ներկայացնում ենք խաղերի մի շարք, որն ուղղված է ինքնուրույն ընթերցանությունը ավելի արդյունավետ անցկացնելու ու ցանկալի դարձնելու համար:

Խաղը նախատեսված է 30 հոգանոց III դասարանի համար: Կազմում են 10-ական խմբեր (յուրաքանչյուր շարքում՝ 10 աշակերտ):

Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ են նախապես՝ տեխնոլոգիայի ժամին, կտրատած կարմիր, կանաչ, դեղին տերևներ և պաստառ՝ որի վրա պատկերված է հսկա ծառի բուն՝ ճյուղերով: Կարելի է ծառի վրա նկարել աչքեր, քիթ ու բերան: Բարի ժպիտը էլ ավելի կներշնչի երեխաներին, կոգևորի:

Բարձրաձայն կարդալ համապատասխան թեմայով ընտրված տեքստը:

Խմբերին կբաժանվի դեղին, կարմիր և կանաչ տերևները: Երեխաները նախապես տերևների ետևում կգրեն իրենց անունները: Ուսուցիչը կբացատրի առաջադրանքի էությունը: Խմբերից յուրաքանչյուրին կտրվի մի խոսքի մաս, ըստ խմբերի՝ դեղին-գոյական, կարմիր-ածական, կանաչ-բայ: Աշակերտները լուռ բնագրից կընտրեն խոսքի մասն ու կգրեն տերևի վրա: Ով շուտ վերջացնի, կմոտենա և կփակցնի իր տերևը ծառի ճյուղին: Արդյունքում՝ խմբերից յուրաքանչյուրը կստուգի մյուսի առաջադրանքի ճշտությունը (կարմիրը՝ դեղինի, դեղինը՝ կանաչի, կանաչը՝ կարմիրի): Քանի որ նախապես տերևների ետևում գրվում են աշակերտների անունները, հայտնի կդառնա, թե ով լավ չի յուրացրել խոսքի մասերը: Կհաղթի այն խումբը, ով անսխալ կկատարի առաջադրանքը, իսկ սխալ գրված խոսքի մասը «ծառից կպոկվի և արմատների մոտ կփակցվի մինչև մյուս խաղը:

Այս ամենի արդյունքում կստացվի մի ծառ, որը խորհրդանշում է դասարանը և տերևները՝ աշակերտները:

Խաղի շնորհիվ լուծվում են թե՛ ուսումնական, թե՛ կազմակերպչական և թե՛ դաստիարակչական խնդիրներ:

Այսօր թե՛ կրտսեր, թե՛ միջին և թե՛ ավագ դպրոցականները մեծ մասամբ դիտում են օտարերկյա արտադրության ֆիլմեր, մուլտֆիլմեր, խաղեր, զբաղվում համակարգչային տարատեսակ խաղերով: Նույնիսկ բակային խաղերն են փոխվել: Երբեմնի «Պահմտոցին այսօր դարձել է «Ֆորտ Բոյարի բանալիները:

Ժողովրդական հեքիաթները, առակները, ասացվածքները, առածները միշտ էլ հոգեհարազատ են եղել բոլոր տարիքային խմբերին:

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերին՝ II, III, IV դասարաններում, հեքիաթների կամ այլ գլխագրերի թեմատիկ խմբի ամփոփումն ու ամրապնումը կարելի է զուգակցել երեխաներին հոգեհարազատ խաղով:

Ֆորտ Բոյարի բանալիները մի հետաքրքիր ու իմաստալից խաղ է: Այն կազմվել է հեռուստատեսային համանուն խաղի հիմքով: Խաղը կազմված է ընտրանքային փուլից:

Յուրաքանչյուր փուլ ունի երեք խաղացող:

Խումբը կազմված կլինի 10 հոգուց (1 շարք): 30 հոգանոց դասարանում կլինի 3 խումբ: Յուրաքանչյուր խաղին կմասնակցի 10 հոգուց 3-ը: Հաջորդ փուլին՝ մյուս 3-ը: Խմբի ղեկավարը, ով ընտրվում է նախապես, ուժեղագույնն է, մասնակցում է սուպեր խաղին:

Գրատախտակին փակցվում է պաստառ՝ 4 շարքից կազմված գրպանիկներով:

«ՖՈՐՏ ԲՈՅԱՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ»

Յուրաքանչյուր գրպանիկում 3 հարց է տեղադրված, որը ընտրովի տարբերակով քաշում է աշակերտներից 3-ը:

Գրպանիկներին ամրացված են փայլաթիթեղից պատրաստված բանալիներ: Ճիշտ պատասխանելու դեպքում բանալին մնում է խմբին: Սխալ պատասխանելու դեպքում բանալին մնում է գրպանիկում:

Առաջին փուլն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ կամ շարք հաշվում է, թե 3 հարցից քանիսին է պատասխանել և քանի բանալի ունի:

Նույնությամբ անց են կացվում հաջորդ 2 փուլերը, ապա՝ հաշվում բանալիները: Սուպեր խաղն անց է կացվում միայն խմբերի ղեկավարների հետ:

Հաղթում է այն խումբը, ով շատ բանալիներ է կարողանում ձեռք բերել: Հաջորդ խաղերին իրավունք է տրվում, որ հենց հաղթող խումբը կազմի թեմատիկ ամփոփման հարցերը:

Դպրոցի պայմաններում հեշտությամբ կարելի է պատրաստել խաղի համար անհրաժեշտ պարագաներ:

Ստվարաթղթից կտրել բանալիներ և երկու կողմից սոսնձել փայլաթիթեղ:

Գրպանիկները պատրաստելու ամենահարմար եղանակը օրիգամի բաժակն է կամ թղթե բաժակները:

Գրպանիկներում տեղադրվող հարցերը կազմել գլխագրում տեղ գտած թեմատիկ նյութերից: Նախապես կարելի է գրատախտակին գրել գլխագիրը: Օրինակ՝ «Մարդու գործերն ու արարքները:

Փոքրիկ թղթերի վրա գրել տվյալ բաժնի թեմատիկ նյութերից հարցեր: Իսկ պատասխանի համար գծել դատարկ վանդակներ:

Տարրական դասարաններում ճիշտ ընտրված և իրականացված խաղի շնորհիվ կարելի է հասնել բարձր արդյունքների: Այստեղ նշված բոլոր խաղերը, ինչպես նաև խաղն առհասարակ, անհրաժեշտ է դիտել զարգացման մեջ՝ փոփոխելով ու հարմարեցնելով թե՛ուսումնական առարկային, թե՛ տվյալ մանկավարժական գործընթացի նպատակներին և թե՛ երեխաների տարիքային զարգացման աստիճանին, հետաքրքրություններին ու տրամադրություններին:

ԳԼՈՒԽ 3

ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ընթերցանությունը համարվում է մայրենի լեզվի յուրացման, հաղորդակցության, տեղեկության և գաղափարների փոխանակման միջոցներից մեկը: Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է, որը ձևավորվում է նախնական գիտելիքների, փորձի և կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով և սոցիալական վիճակով: Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում և քննադատական վերլուծություն: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում: Ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ելնելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ընթերցանությունն օգնում է իրազեկ դառնալ գոյություն ունեցող խնդիրների մասին՝ ցույց տալով դրանց հաղթահարման ուղիները: Ընթերցանությունը ինքնավստահություն է ապահովում և օգնում է ազատվել սեփական անլիարժեքության ու սահմանափակ լինելու զգացումներից: Ընթերցանությունն ամրապնդում է համոզմունքներն ու հայացքները, մտածելակերպ ու աշխարհայացք է ձևավորում, անհատին պատրաստում է ընդունել նորը, ինչպես նաև կարծիքների փոխանակման ու քննարկումներին մասնակցելու արվեստ է սովորեցնում: Եվ ի վերջո, ընթերցանությունը հնարավորություն է տալիս ծանոթանալ գրականության գոհարների հետ:

Որևէ հետաքրքիր բանի ընթերցումը մարդուն դուրս է բերում լարվածությունից և հանգստացնում է: Գիրքն ու դրա հանդեպ տածած հետաքրքրությունը ժառանգաբար չեն փոխանցվում: Դա գիտելիքներ ձեռք բերելու միջոց է, որի օգնությամբ ուսուցումը պատանի հասակում զգալիորեն հեշտանում է: Ուստի՝ կարևոր է գրքի նկատմամբ ճիշտ վարմունք դաստիարակել, և գրքի նկատմամբ հետաքրքրությունը կառաջանա

ինքնըստինքյան. մարդն ի վիճակի է վերացնել ընթերցանությանը խանգարող բոլոր խոչընդոտները։

Համապատասխան միջավայրի ու պայմանների նախապատրաստման միջոցով մշակութային զարգացումը նպաստում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրության մեծացմանը։ Դրա լավագույն օրինակներից է գրպանային գրքերի հրատարակման քաղաքականությունը, ինչի շնորհիվ գիրքը կարող է մշտապես «ներկա գտնվել և զարդարել անտեղի անցկացվող ժամանակը։

3.1ԻՆՉՊԵ՞Ս ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԵՋ ՍԵՐ ԱՐԹՆԱՑՆԵԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Ինչո՞ւ երեխաները չեն սիրում ընթերցել։ Միգուցե չե՞ն կարողանում։ Այս դեպքում խոսքը ոչ թե տառերը չիմանալու, այլ գրքերը հասկանալու և ապրելու կարողության բացակայության մասին է։

Առաջարկում ենք ծանոթանալ «Գրքային գիդ» կազմակերպության հիմնադիրներից մեկի՝ Մարթա Ռայցեսի §Ընթերցանության օրագրին»։

Ըստ նրա՝ եթե փորձենք երեխային սովորեցնել ընթերցել հետաքրքրաշարժ եղանակով, ապա նրան անպայման դուր կգան գրքերը։ Բացի այդ, կսկսեն վերլուծել, հիշել, քննարկել ու ստեղծագործել։ Օրագիր ունենալու առավելությունները. օրագիրը մարզում է հիշողությունը, քանի որ երեխան չի կարող հիշել գրքի բոլոր մանրամասները։ Դա նվազեցնում է ընթերցելու ցանկությունը։ Օրագրում նշումներ կատարելով՝ նրան այլևս չի անհանգստացնի որևէ բան մոռանալու խնդիրը։ Օրագրի շնորհիվ նաև զարգանում է ինտելեկտը։ Օրագրում գրառումներ անելն օգնում է զարգացնել գրավոր խոսքը, լեզվի կարողությունները, գրել փոխադրություններ, շարադրություններ, թելադրություններ։

Ըստ Մարթա Ռայցեսի՝ ոչինչ այնքան չի մոտիվացնում ընթերցողին, որքան մտածելու ազատությունը։ Մարթա Ռայցեսի օրագրում տեղ է հատկացված ոչ միայն ընթերցանության գրառումներին, այլև ազատ ինքնարտահայտմանը։ Զայրույթը, տագնապը, հիացմունքն ու ուրախությունը երեխաները կարող են արտահայտել գրավոր ձևով։ Ընթերցողական օրագրի առաջին էջերում բացատրվում է, թե ինչպես

գրքերը պետք է ընթերցել: Մարթա Ռայցեսն առաջարկում է գործի դնել երևակայությունն ու պատկերացնել դեպքերի ընթացքը, գրել գրքի ավարտը և այլն: Դա օգնում է մարզել երևակայությունը, նպաստում է սեփական մտքերը արտահայտելուն:

Յուրաքանչյուր գիրք նման է նոր կղզու, խորը օվկիանոսի, հին քաղաքի:

Խնդրենք երեխային նկարել քարտեզ ու գրանցել դեպքերն ու կերպարները, գործողությունների վայրն ու ժամանակը: Դա օգնում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Խնդրեք երեխային նշել գրքերում հիշատակվող խմիչքների և ուտեստների անվանումները, ապա միասին փորձեք պատրաստել ու հյուրասիրել ընկերներին: Ընթերցանության ընթացքում երեխաները կարող են դուրս գրել մեջբերումները, նոր բառերն ու հետաքրքիր փաստերը, նկարազարդումներ անել, գրել գրախոսություններ, կազմել խաչբառեր:

Ինչպես գիտենք, երեխաներն աչքի են ընկնում հետաքրքրասիրությամբ: Քայլելուն պես նրանք սկսում են ուսումնասիրել ամեն ինչ՝ փորձելով բացել դարակները: Գիրքն էլ մի այդպիսի դարակ է: Հնարավոր է երեխան մոռացել է այդ մասին, քանի որ գրականությունն վերածվել է ձանձրալի կարգուկանոնի, որտեղ գնահատում ու պատժում են սխալվելու համար:

Ընթերցողական օրագիրը ընթերցանությունը վերածում է ստեղծագործական ճանապարհորդության, որտեղ կարելի է խաղալ, երևակայել, ուսումասիրել ու զարգացնել ընթերցելու կարողությունը: Այն կա յուրաքանչյուրի մեջ, ուղղակի անհրաժեշտ է բացել:

Իսկ ի՞նչ են կարդում այսօրվա երիտասարդներն ամբողջ աշխարհում: Ուսումնասիրելով ամերիկյան __և ընդհանրապես__աշխարհում կիրառական դպրոցական գրականության ծրագրերը՝ պարզում ենք, որ տարածված են ինչպես դասականների՝ Հոմերոսից, Շեքսպիրից մինչև Չարլզ Դիքենսի, Մարկ Տվենի ու Մարգրետ Միթչելի, այնպես էլ ժամանակակիցների՝ Օրուելի, Գոլդինգի, Կաֆկայի գործերը, նաև ռուս գրականություն՝ Տոլստոյ, Դոստոևսկի: Հայ սովորողների ընթերցանության ցանկը շատ չի տարբերվում: Բայց մեր խոսքի առարկան կլինի մասնավորապես 20-րդ դարի համաշխարհային գրականությունը

Երբ միանգամից հանձնարարում ես ընթեցանության մի քանի նյութ, սովորողներն ընդվզում են. կարծում են՝ բոլորը միասին պիտի ընթերցեն։ Թեպետ բոլորը միասին ընթերցելու գաղափարն ամենևին էլ անիրագործելի չէ։

ԳԼՈՒԽ 4

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹՅԱՆ ԳՐԿՈՒՄ

Անչափ կարևոր է ընթերցանությանը նպաստող միջավայրը: Մի բան պարզ է, որ այսօր երեխաները քիչ են կարդում: Դա էլ իր բացատրությունն ունի: Տեխնիկապես հագեցած մեր դարում հեռուստացույցը, համակարգիչը և այլ ժամանակակից սարքեր փոխարինում են գրեթե ամեն ինչին: Այնուամենայնիվ, անկախ ժամանակից և պայմաններից, գրագետ և խելացի անհատի ձևավորման գործում գրքերը մնում են առաջին տեղում: Գրականությունն ունի ճանաչողական, հոգևոր-բարոյական մեծ արժեք, որը բնութագրում է նաև հոգևոր զարգացման չափանիշները: Այսինքն՝ գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, նրա համար ինքնակատարելագործվելու, դժվարությունները հաղթահարելու համար ուղիներ բացում: Ճշմարտության, բարու, խղճի, գեղեցիկի, արդարության, ազատատենչության գաղափարներն արտացոլված են գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններում: Հայ և համաշխարհային դասականների ստեղծագործությունների հերոսները հոգևոր բարձրագույն արժեքներ կրողներ են: Առանձնապես մեծ է դրական կերպարների ներգործությունը, որոնք սերունդներ են դաստիարակում իրենց խիզախության, անձնազոհության օրինակներով: Ուրեմն ինչպե՞ս երեխաների մեջ սեր արթնացնել ընթերցանության հանդեպ: Հետաքրքիր և արդյունավետ ինքնուրույն ընթերցանությունը պետք է դուրս գա գրադարանի սենյակից: Ընթերցանություն պետք է կազմակերպել նաև բնության գրկում: Յուրաքանչյուր ընթերցանություն դարձնել տեսանելի, հուզիչ և առավել ընկալելի:

Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողունակությունը: Սակայն դա ինքնաբերաբար չի կատարվում:

Բնության գեղեցկությունը, նշանակությունը ընկալելու, հասկանալու համար անհրաժեշտ է նախապատրաստական որոշակի աշխատանք կատարել:

Երեխային պետք է դաստիարակել այնպես, որ նա ընկալի բնության հմայքը, գեղեցկությունը, լինի գեղագիտական արժեքների կրողը:

Երեխաների մտքի և զգացմունքների վրա ներգործությունն ուժեղացնելու իմաստով էական նշանակություն ունեն ընթերցանությունից հետո անցկացվող զրույցները:

Դրանք աշակերտներին հնարավորություն են տալիս կրկին անդրադառնալ գրքի բովանդակությանը: Միաժամանակ նպաստում են երեխայի խոսքի ակտիվացմանը և բառապաշարի հարստացմանը:

Նպատակը

- հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը, կարդացածի վերաբերյալ առաջադրված հարցերը, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև կապերը
- լսել դիմացինի խոսքը, արձագանքել, բանավիճել՝ նոր փաստարկներ ու հիմնավորումներ ներկայացնելով
- մասնակցել խմբի գործունեությանը և հանդես բերել տարբեր դերեր ստանձնելու կարողություններ
- ուշադրություն դրսևորել ուրիշների կարծիքների և գաղափարների հանդեպ, զրույց սկսել խմբի անդամների հետ

ԳԼՈՒԽ 5

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՅՍ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՐՈՒՄ

Արդի տեղեկատվության բազմազանությունն ու ծավալն ակնհայտ են դարձնում, որ դպրոցը, մանկավարժը, աշակերտը և ծնողը կանգնած են գիտելիքի ահռելի պաշարների առջև, որոնց յուրացումը գրեթե անհնարին է: Պետք է ճշգրտվի՝ արդյոք մենք նպատակ ունենք աշակերտին սովորեցնել ամեն ինչ: Այդ պատճառով ուսուցիչը, ծնողը պետք է տեղյակ լինեն երեխայի հետաքրքրությունների շրջանակին և աղբյուրների: Ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները դուրս են եկել մշտական, կայուն հսկողությունից. ուստի և երեխան հաճախ ձեռք է բերում իր տարիքին չհամապատասխանող տեղեկատվություն, ինչից էլ բխում են բազմաթիվ խնդիրներ:

Մենք ապրում ենք նոր տեխնոլոգիաների և համակարգիչների դարում, և այն, ինչի հետ որ մենք առնչվում ենք թե տանը, թե աշխատանքային վայրում, և իհարկե՝ դպրոցում, անմիջական կապ ունի թվայնացման հետ: Այսօրվա նոր սերնդի երեխաների մասին ասում են՝ «§ծնվել է պուլտը ձեռքին¦: Եվ ի՞նչ կարող է տալ ուսուցիչը ամենագետ երեխային՝ մեր ժամանակակից սովորողին: Գրադարանը պետք է լինի ավելի շատ ծավալուն ու ֆունկցիոնալ, քան ավանդական գրադարանը, որովհետև այստեղ երեխաները ոչ միայն ընթերցում են գրքերի միջավայրում, այլև հետազոտում են, հարստանում են գիտելիքներով, շփվում են միմյանց հետ: Հյուրընկալ միջավայրը տրամադրում է երեխաներին ավելի շատ ժամանակ անցկացնել գրադարանում, քանի որ այստեղ կարելի է գտնել նրանց հուզող հարցերի պատասխանները, հանդիպել ընկերներին և պատրաստել դասերը, գրել ռեֆերատներ, մասնակցել քննարկումների, հավաքել նյութեր հետազոտական աշխատանքների համար: Չէ՞ որ միայն գրադարանում կան այդքան զանազան գրքեր, դասագրքեր, բառարաններ, հանրագիտարաններ: Եվ, իհարկե, չպետք է մոռանալ պայմանների մասին, որտեղ պետք է իրագործվեն թե անհատական, թե խմբային աշխատանքներ: Բոլորս գիտենք, որ աշակերտին օգնելու համար ուսուցչից պահանջվում են գիտելիքներ և ինտելեկտուալ, և տեխնիկական, և հոգեբանական:

Եթե գրադարանը բաց է մինչև դասերի սկիզբը, ապա աշակերտները շտապում են գրադարան, որպեսզի ինչ-որ դաս կրկնեն, կամ տնային առաջադրանքները ավարտեն, իսկ ուսուցիչները՝ դասին անհրաժեշտ նյութը ստանալու համար կամ, ինչո՞ւ ոչ, նաև ուսուցչի ջերմ խոսքով լիցքավորվելու համար: Դասերի ընթացքում գրադարանը նույնպես պետք է աշխատի, որովհետև դասը լիակատար անցկացնելու համար կարող են քարտեզներ, ատլասներ, բառարաններ, և այլ տեղեկատվական աղբյուրներ անհրաժեշտ լինել, և, ի վերջո, կարելի է դասը անցկացնել անմիջապես գրադարանում՝ գրքերով ու ծաղիկներով շրջապատված, կամ մաթեմատիկայի, կենսաբանության և նույնիսկ հեքիաթի անկյուններից մեկում: Գրադարանի, գրքի, ընթերցասիրության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար պետք է անցկացնել մի շարք միջոցառումներ՝ դպրոցական գրադարանի «հիվանդ գրքերի բուժում, գրքերի նվիրատվություն, միջոցառումներ՝ նվիված գրքին: Բեղմնավոր գործունեություն ունեցող դպրոցն այսօր շարունակում է իր ճանապարհը ՝ նոր սերունդի կրթադաստիարակչական աշխատանքը նորովի, արդիական հիմքերի վրա դնելով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք հատկանիշների դաստիարակում և դրանում իր ուրույն տեղն ունի նաև ինքնուրույն ընթերցանությունը:

Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Կարելի է ընտրել այնպիսի

բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով և հոգածությամբ վերաբերվել գրքին, իմանալ գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով վերաբերվել գրադարանի գրքերին: Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը, կարևորի ուրիշին հարգելու հատկանիշը, գնահատի արդարամտությունը: Մերժի բացասական հատկանիշները, անտարբերությունը, եսասիրությունն ու վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ:

Ընթեցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենց սա էլ անում է մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքրի ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում

իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում;

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տպագիր աղբյուրներ

1. Հայոց լեզու և գրականություն: «Գիտամեթոդական հանդես» 5, 2017 (118) 2. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա: Երևան, 2006թ.

3. Լ.,Հախվերդյան, Զրույցներ լեզվի մասին: Երևան, 1982թ.

4. Լ. Ս. Վիգոտսկի, Խաղը և դրա դերը երեխայի մտավոր զարգացման մեջ, /ռուս./2002թ.

Էլեկտրոնային աղբյուրներ

1. «Մխիթար Սեբաստացի», կրթահամալիր, «Դպիր» մանկավարժական հանդես

2. https://dpir.mskh.am/hy/search/node/%D5%84%D5%A1%D6%80%D5%AB%20%D4%

3. https://nonnalibrary.wordpress.com/page/1/

B3%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6